ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅՑԵԼԵՑԻՆ ՇՈՒՌՆՈՒԽ ԳՅՈՒՂ

02.06.2021 15:07

Ելնելով երկրում տիրող ծանր իրավիճակից, այս տարի երեխաների տոնը Երևանում նշելու փոխարեն, ՀՀ փաստաբանների պալատը նախընտրեց ներկայացուցիչներ ուղարկել Սյունիքի մարզի Շուռնուխ գյուղ՝ փորձելով ուրախացնել և հաճելի անակնկալ պարգևել թշնամու հետ դեմհանդիման ապրող երեխաներին:

Հաշվի առնելով, որ երեխաները հունիսի 1-ին ներգրավված էին մեկ այլ միջոցառմանը՝ Փաստաբանների պալատի ներկայացուցիչները պալատի նախագահ Արա Զոհրաբյանի ուղեկցությամբ Շուռնուխ այցելեցին այսօր՝ 2021թ. հունիսի 2-ին:

Շուռնուխ գյուղում բնակվում են 26 երեխա, նրանցից 20-ը՝ դպրոցահասակ:

ՀՀ փաստաբանների պալատը փաստաբանների կողմից երեխաներին նվիրեց հեծանիվներ, դպրոցական պայուսակներ, գրենական պիտույքներ, խաղալիքներ և քաղցրավենիք:

Երեխաները ոգևորությամբ դիմավորեցին փաստաբաններին, կիսվեցին իրենց ապագայի երազանքներով՝ ոմանք թռչող անօդաչու սարքեր են պատրաստելու, ոմանք էլ՝ զինվոր են դառնալու, պաշտպանելու են իրենց գյուղը, որին ադրբեջանցի զինվորներից ընդամենը մեկ փողոց է բաժանում:

Երեխաների մարտական ոգին ու տրամադրությունը բարձր էր: Արա Զոհրաբյանի հարցին. «Ձեք վախենում չէ՞ ադրբեջանցիներից», երեխաներից մեկն ասաց. «Ձէ՛, թող իրանք մեզանից վախենան»:

Արա Զոհրաբյանը երեխաներին բացատրեց փաստաբանի դերն ու նշանակությունը, ասաց, որ փաստաբանը միշտ կանգնած է մարդկանց կողքին՝ պաշտպանելով նրանց իրավունքները:

«Մենք այս քայլով ուղղակի ուզում ենք ցույց տալ շուռնուխցիներին, որ փաստաբանները նույնպես իրենց հետ են, իրենց կողքին են»,- նշեց Արա Զոհրաբյանը:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })